

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	4
1.1.1. Ջրահեռացման համակարգի կառավարում	4
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	5
1.3. Ջրահեռացման համակարգ	6
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	7
1.5. Էներգահամակարգ	7
1.6. Մեքենա-մեխանիզմներ	8
2. Առևտրային տնօրինություն	9
2.1. Բաժանորդների տվյալներ	10
2.2. Հասույթ	10
2.3. Գանձում	11
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	12
2.5. Ջրաչափեր	13
2.6. Այօրինի միացումների հայտնաբերում և վերացում	14
3. Տեխնիկական տնօրինություն	15
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	16
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	17
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	19
3.4. Ջրատար համակարգի բարելավում	19
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	22
3.6. 1-85 թեժ գիծ	23
4. Լրատվական ծառայություն	24
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	27
5.1. Դասընթացներ/սեմինարներ	28
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	30
5.3. Համագործակցություն ՀՀ ԱԲ նախարարության, մարզպետարանների, ՏԻՄ-երի և այլ գերատեսչությունների հետ....	30
6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ	31
6.1. Համակարգչային ցանց	32
6.2. Բնտերակտիվ համակարգ	32

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարառոտողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես.

Արմավիրի մարզ

● «Արմավիր» տեղամասի աշխատակիցների կողմից Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի Հոկտեմբերյան փողոցի (d=100մմ L=820գծմ) և նշված փողոցից սնվող թվով 7 բազմաբնակարան շենքերը սնող (d=57մմ, L=220 գծմ) խիստ վթարային վիճակում գտնվող պողպատյա ջրագծերը փոխարինվել են d=90մմ և d=63մմ պեթ խողովակներով՝ խրամուղու քանդման եղանակով, իսկ շահագործումից հանված d=100մմ, L=820 գծմ և d=57մմ, L=220 գծմ պողպատյա խողովակները չեն ապամոնտաժվել: Ջրագծի փոխարինման արդյունքում տնտեսվել է մոտ 2,5-3,0 լ/վ ջուր, կտրուկ նվազել է ավելցուկային ճնշումը, կրճատվել են նաև ջրագծի շահագործման ծախսերը:



● «Էջմիածին» ենթատեղամասի աշխատակիցների կողմից Արմավիրի մարզի, Շահումյանի Թոչնաֆարիկա բնակավայրի քայքայված ջրագիծը փոխարինվել է նոր պեթ ջրագծով (d=110մմ L=950գծմ), ինչի արդյունքում տնտեսվել է 5-7լ/վրկ ջուր:

Արարատի մարզ

● «Մասիս» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել է Մարմարաշեն բնակավայրի N 42 փողոցի վթարային ջրագծի վերակառուցման աշխատանքներ՝ պեթ d=50-63մմ խողովակներով, ինչպես նաև թվով 3 տնային միացումների իրականացում գոյություն ունեցող դիտահորերում:



1.1.1. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

● Նորագյուղ թաղամաս 227/5 հասցեում ջարդված և խցանված d=200մմ կերամիկական կոյուղագծի L=12գծ/մ երկարությամբ հատվածը «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է նոր՝ d=200մմ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով, և ներկայումս կոյուղագիծը գործում է անխափան:



Դեկտեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2331
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	58308
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	51496
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	12830
Ջրաչափական հանգույցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	0
Շահագործումից հանված ջրագիծ	մ	1958
Կառուցված ջրագիծ	մ	4646
Կառուցված կոյուղագիծ	մ	462.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	12
Փոխարինված փական	հատ	26
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	276
Մաքրված դիտահոր	հատ	880
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	7.1
Վերացված վթարներ		
Ջրամատակարարման ցանցում	հատ	846
Ջրահեռացման ցանցում	հատ	1362
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Դեկտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	921	955	929

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է դեկտեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ										Ընդամենը
	15	20	25	30	32	40	50	65	80	100	
Տեղադրված	153	10	2	2	3	0	4	0	0	0	174
Փոխարինված	215	13	13	1	11	7	11	1	1	1	274
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	371	20	5	8	0	5	4	2	0	1	416
Ընդամենը	739	43	20	11	14	11	19	3	1	2	864

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 864 ջրաչափ: Կատարված աշխատանքների 86 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Դեկտեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արարկիր	0	280	0
2	Քանաքեռ-Զեյթուն	0	315	0
3	Մաշտոց	0	302	6
4	Շահումյան	0	202	21
5	Շիրակ	1010	450	169.5
6	Արթիկ	0	98	3
7	Ապարան	0	53	0
8	Ալավերդի	1780	7	18
9	Աշոցք	0	5	0
10	Բերդ	30	11	38
11	Իջևան	0	46	0
12	Լոռի	0	191	6
13	Նոյեմբերյան	0	21	0
14	Սպիտակ	0	22	0
15	Ստեփանավան	1470	22	0
16	Թալին	0	17	0
17	Տաշիր	0	11	0
18	Չարենցավան	0	100	8
19	Արովյան	40	151	58
20	Հրազդան	0	102	96
21	Կենտրոն	300	293	12
22	Հյուսիս	190	281	0
23	Հարավ	0	393	12
24	Էրեբունի	0	180	0
25	Արմավիր	0	143	4
26	Արտաշատ	0	127	0
27	Էջմիածին	0	116	0
28	Աշտարակ	2120	15	10
29	Արարատ	0	77	22
30	Մասիս	0	90	0
31	Գավառ	450	21	0
32	Սևան	270	64	0
33	Մարտունի	0	24	0
34	Վարդենիս	0	17	0
35	Ճամբարակ	83	16	17
36	Դիլիջան	0	38	30
37	Վայք	0	17	0
38	Եղեգնաձոր	0	16	0
39	Ջերմուկ	0	51	0
40	Սիսիան	0	44	0
41	Գորիս	0	33	0
42	Կապան	1247	51	24
43	Մեղրի	0	42	0
	Ընդամենը	8990	4555	554.5

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

● Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանի մանր ճաղավանդակի կոնվեյերը խցանվել էր, որն էլ ապամոնտաժվեց և մաքրվեց: Շարքից դուրս էր եկել մաքրման կայանի հիմնական ավտոմատ անջատիչը, որի պատճառով ամբողջ կայանը հոսանքազրկվել էր: Արդյունքում այն փոխարինվեց և այժմ աշխատում է անխափան:

● Երևանի կեղտաջրերի մաքրման կայանի աղբի տեղափոխման կոնտեյների հատակը քայքայվել էր, և առաջացել էին մեծ անցքեր, որի պատճառով աղբից անջատված ջուրը լցվում և տարածվում էր կայանի ամբողջ հատակին: Արդյունքում այն վերանորոգվեց և նման խնդիրներ այլևս չկան: Կտրվել էր նաև քերիչ սանրի շղթան, որը նույնպես վերանորոգվեց և այժմ աշխատում է բնականոն ընթացքով:

● Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանի հակադարձ փականները խցանվել էին, որի պատճառով ջուր չէր մղվում: Արդյունքում դրանք ապամոնտաժվեցին մաքրվեցին և այժմ պոմպակայանն աշխատում է բնականոն ընթացքով: Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	88,598	10,8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	61,461	25,2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	166,127	5,4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	93,125	10,8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	107,127	9,9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	20,348	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	12,666	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	11,450	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	13,200	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ



Թվով 342 բակային պոմպակայանում կատարվել են ուսուժասափրություններ, որոնց արդյունքում թվով 266 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿԶ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ: Թվով 8 հասցեում հայտնաբերվել են ջրագծի վթարներ: Ուսուժասափրվել է նոր կառուցված թվով 9 պ/կ:

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Դեկտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար դեկտեմբեր ամսվա ընթացքում թվով 2 մեքենայի շարժիչը մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 5 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճուպանները:



Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 4 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամսանիվներ, առանցքակալներ, կիսասոնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Փոխարինվել են թվով 48 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, գտիչներ, արգելակման հեղուկ, անտիֆրիզ և քսայուղեր:

Թվով 47 անվադող նորոգվել, փոխարինվել և հավասարակշռվել է:

Թվով 9 մեքենա-մեխանիզմի մարտկոցներ փոխարինվել են նորերով:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 4 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 2 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 17 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 3 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ: Թվով 2 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Թվով 3 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.01.2023թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 592,645 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2022թ. դեկտեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	666,988	565,606	84,8
	Իրավաբանական անձ	31,256	27,039	86,5

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	739,297	602,187	81,5
	Իրավաբանական անձ	36,650	26,506	72,3

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 1090 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցլության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Դեկտեմբեր ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4787 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 12.2022
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2512	1679	305	4496
	Իրավաբանական անձ	162	102	27	291
	Ընդամենը	2674	1781	332	4787

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ դեկտեմբեր ամսին փոխարինված 4787 ջրաչափերի մոտ 44 %-ը (կամ 2113 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 224,834 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2022թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Դեկտեմբեր ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,404 մլն. դրամ (108 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում նախկինում կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում

կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը հաշվետու ամսին գերծ է փասցել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունները):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Դեկտեմբեր ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 133 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 18.5 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2022թթ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
24213	2868955929	11538	1235158571	92	8608363	12583	1625188995	7320	763574849

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 48 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 0 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.01.2023թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	9,632	2,180
Բնակիչ-բաժանորդներ	6,950	1,462
Իրավաբանական անձեր	2,682	718

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՏՏ սպասարկման տարածքում շուրջ 304.9 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2022 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.01.2023թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	708,287	600,838	84.83	35,566	26,498	74.50
	Առանց ջրաչափի	31,010	1,349	4.35	1,084	8	0.74

Տվյալների բազայում 01.01.2023թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	879,567	393,582	44.75	39,311	11,134	28.32

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:
 Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 5823 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1666 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:
 Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2425	1992	81.9
գ.Պռոշյան	1656	1129	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5959	1908	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 13387, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 13281, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 3087, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 3726, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2234, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3203 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 5836 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	322	154,152	28,048,587

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի դեկտեմբեր ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.5%, ինչը նույնն է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 32 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2022թ-ի դեկտեմբեր ամսին, 2021 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 165 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը ավելացել է 52 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 15 920 կՎտ.ժ (3.03 %), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 15 պոմպակայան ավելացել է «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 14 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 6604 կՎտ.ժ: Իսկ առանց այս պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը այն կնվազեր 22 524 կՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ուսումնասիրված հասցեներ

Հաշվետու ժամանակահատվածում 78 հասցեներում կատարվել են էլ. հաշվիչի ընթերցման, ցուցմունքների գույքագրման աշխատանքներ՝ նոր ընդունվող պոմպակայանների գնում, համապատասխանելիության ստուգում: Կատարվել է փոխադարձ ակտերից էլ. էներգիայի ծախսերի դուրսբերում, մշակում և վերլուծություն, «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ փաստաթղթաշրջանառության կազմակերպում, էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայից ձեռք բերված էլ. էներգիայի ամենօրյա հաշվառում:

● Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 77 կՎտ.ժամ -3%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ




Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 31 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 23 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 342 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 266 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների ու լուսավորության վերականգնման աշխատանքներ: Թվով 8 հասցեում հայտնաբերվել են ջրագծի վթարներ: Ուսումնասիրվել է նոր կառուցված թվով 9 պ/կ:

Ինվերտորների տեղադրում

Տեղադրված ընդհանուր 157 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 29,045 կՎտ.ժ կամ 11%:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 8 խոշոր պոմպակայանում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


● 2022թ. դեկտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 24 916 ԿՎտ/ժամ (2,94%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 114 824 ԿՎտ.ժ/ամիս կամ 6,30%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 119 876 ԿՎտ.ժ կամ 3,02 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեռլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են դեկտեմբեր ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
ՍՏ համակարգ է անցկացվել, վերանայվել համայնքների ջրագծերը	համայնքներ	5
ՃԿՓ-ի և հոսքաչափերի տվյալների բազաների ճշգրտում և լրացում	լրացում	1
Լոռու մարզի Վեռլիա Ջուր ՓԲԸ սպասարկվող բնակավայրերի փողոցների և շենք/ շինությունների թվային շերտերի թարմացում և բազավորում	մարզ	1
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	217
Նոր շենք/շինությունների թվայնացում, տեղադիրքի ուղղում ըստ աերոնկարների:	մարզ	1
Լոռու մարզում շենք/շինությունների քանակը 118 436-ից դարձել է 152 426		
Լոռու մարզում հասցեավորված օբյեկտների քանակի ավելացում մինչև 5000 օբյեկտ	օբյեկտ	5000
Լոռու մարզում փողոցների/ճանապարհների քանակը 6793-ից դարձել է 7018	ճանապարհ	7018
Շահագործումից հանված ջրագիծ Երևանում	մետր	1172,9
Տեղադրված կամ փոխարինված փականներ Երևանում	հատ	171
Մարզերում ընդհանուր կոյուղու երկարությունը /ՍՏՀ-ում առկա/	կմ	1808
Երևանում ընդհանուր կոյուղու երկարությունը /ՍՏՀ-ում առկա/	կմ	1789
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական կետերի ուղղում	կետ	2423
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական կետերի ուղղում	կետ	276
Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2483
Մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	9075
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	214
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	1079
Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1781
Մարզային կոյուղու երկարությունը	կմ	1805

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք դեկտեմբեր ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը

Գառնի-Երևան ջրատար

Գառնիի ձորում քլորատան հարակից մասում, գործող ջրատարները (D=600մմ և D=700մմ) քլորի ազդեցության հետևանքով շարքից դուրս էին եկել: Արդյունքում ունենում ենք ջրի և քլորի կորուստ, որը վտանգավոր էր մարդկանց և շրջակա միջավայրի համար: «Ջրառ» բաժնի կողմից ձեռնարկվել են այդ ջրատարի փոխարինման աշխատանքներ: Գործող փտած խողովակների փոխարեն կառուցվել է նոր D=1000մմ և L=80մ ջրատար: Ջրատարի միացման համար անհրաժեշտություն է առաջացել կապտամներից ջրթափ կազմակերպել: Ջրատարի միացման աշխատանքներից հետո, նախքան ջրատարը շահագործելը, այն անհրաժեշտ էր լվանալ: Միայն դրանից հետո ջուրն ուղղվել է դեպի Երևան:



Գառնի-Երևան ջրատարի շրջայցի ընթացքում Նուբարաշենից հետո հայտնաբերվել է 3 հատ վթար, որոնք վերացվել են «Էրեբունի» ՇՏ-ի ուժերով: Արդյունքում տնտեսվել է ≈15լ/վ ջրաքանակ:

Արին-Բերդ-Խարբերդ ջրատար

Ջրատարի վրա Խարբերդ ՕԿՁ-ի վերնամասում հայտնաբերվել է վթար՝ $\approx 2\text{լ/վ}$ ծավալով: Այն անմիջապես կանխվել է «Շենգավիթ» ՇՏ-ի կողմից:



Ընթացիկ ամսում նաև կատարվել են ջրաքանակների կարգավորման աշխատանքներ:

Գոտիավորման աշխատանքներ

Քաղաք Գյումրի

● Քաղաք Գյումրի Ղանդիլյան 3 շենքը սնուցող $D=50\text{մմ}$ պողպատե ջրագծի հաճախակի վթարվելու պատճառով, Շիրակ տեղամասի կողմից որոշվել է այն փոխարինել նոր, ՊԷ խողովակով: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է $D=50\text{մմ}$, $L=30\text{մ}$ պողպատե ջրագիծ, կառուցվել է $D=50\text{մմ}$ ՊԷ, $L=30\text{մ}$ նոր ջրագիծ: Արդյունքում տնտեսվել է մոտ $Q = 0,5-1\text{լ/վ}$ ջրաքանակ:



● «Շիրակ» տեղամասի աշխատակիցների հետ ուսումնասիրվել է Գյումրի քաղաքի Շիրակացի-Մնջոյան փողոցների խաչմերուկով անցնող $D=100\text{մմ}$ թուջե ջրագծի վրա տեղի ունեցած վթարը: Վթարի ջրերը, լցվելով հին չգործող ջեռուցման համակարգի թունելի մեջ, դուրս էին գալիս մոտ 300մ հեռավորությունից: Վթարի ստույգ տեղը ուսումնասիրելուց և հայտնաբերելուց հետո խցափակման եղանակով շահագործումից հանվել է $D=100\text{մմ}$, $L=85\text{մ}$ թուջե ջրագիծ: Արդյունքում տնտեսվել է $Q = 1-2\text{լ/վ}$ ջրաքանակ:



Գյուղ Ղազանչի

● Ղազանչի գյուղում ջրամատակարարման հետ կապված խնդիրն ուսումնասիրվել է Աշոցք ՇՏ-ի աշխատակիցների հետ: Հիմնական դիտահորի շուրջ փորման աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են բազմաթիվ, ոչ պիտանի ջրագծեր: Խցափակման եղանակով շահագործումից հանվել է $D=80\text{մմ}$, $L=13\text{մ}$ և $D=50\text{մմ}$, $L=144\text{մ}$ պողպատե ջրագիծ, ապա կառուցվել է $D=63\text{մմ}$, $L=15\text{մ}$ ՊԷ ջրագիծ: Արդյունքում տնտեսվել է մոտ $Q=1\text{լ/վ}$ ջրաքանակ և վերականգնվել է ջրամատակարարումը:




Քաղաք Երևան

● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների հետ միասին իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Արշակունյաց 3 շենքի բակում դիտահորի մեջ: Խցափակման եղանակով շահագործումից հանվել է $L=10$ մ ջրագիծ և տնտեսվել է $Q = 2$ լ/վ:



● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է անհայտ ռետինե միացում Արշակունյաց պողոտա Կոմիտասի այգու մոտ, դիտահորի մեջ: Նշված ջրագիծը խցափակվել է՝ տնտեսելով $Q = 1$ լ/վ ջրաքանակ:


● «Արաբկիր» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Ակսել Բակունց 18 շենքի մոտով անցնող $D = 100$ մմ պողպատե ջրագծի վրա: Ներսրսկման եղանակով շահագործումից հանվել է $L=60$ մ հատված՝ փոխարինելով $D = 40$ մմ, $L = 50$ մ հատվածով:



● «Արաբկիր» տեղամասի աշխատակիցների հետ Վաղարշյան փողոցում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Վաղարշյան 19 շենքի հարևանությամբ անցնող $D = 200$ մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 8$ լ/վ ջրաքանակ:

● Բակունց 18 շենքի մոտ և Վաղարշյան 19 շենքի հարևանությամբ հայտնաբերված վթարների արդյունքում տնտեսվել է $Q \approx 12$ լ/վ ջրաքանակ:

● «Արաբկիր» տեղամասի աշխատակիցների հետ Վաղարշյան փողոցում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Վաղարշյան 22 շենքի հարևանությամբ անցնող $D=100$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 4$ լ/վ ջրաքանակ:



● «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում տեսախցիկի օգնությամբ հայտնաբերվել է գաղտնի վթար Նոր Նորքի 9-րդ գանգված դեպի Այգեգործական թաղամաս գնացող ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 1$ լ/վ ջրաքանակ:

● Ենգավիթ տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Արարատյան 62 պ/կ ելքի ջրագծի վրա՝ Արարատյան 62/2 շենքի նկուղում, $D = 50$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 2$ լ/վ ջրաքանակ, ինչպես նաև էլեկտրաէներգիա:



3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.


● Ք. Իջևանի Ազատամուտ քլորակայանում հիպոքլորիդի հաբի համակարգի խափանված ցիրկուլացիոն պոմպը փոխարինվել է նորով, որը ապահովել է հիպոքլորիդի համակարգի անխափան աշխատանքը:



● Ք. Գառնիի Գառնի քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով Գառնի ջրատարի քլորատան դիմաց փասաված խողովակի փոխարինման հետ կապված կատարվել է հեղուկ քլորի համակարգի ապամոնտաժում և մոնտաժում:



● Ք. Գյումրիի Կապս քլորակայանում կատարվել է շարքից դուրս եկած դոզատորի փոխարինում, կար նաև խնդիր կապված քլորակայանը սնուցող պոմպերի ջրաքանակի հետ: Արդյունքում փոխարինվել են ինժեկտորները՝ նախկին 4 կգ/ժ փոխարեն տեղադրվել են 1 կգ/ժ և 2 կգ/ժ արտադրողականությամբ ինժեկտորներ, որն ապահովել է հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:




● Ք. Աշտարակի Շոր-Շոր քլորակայանում հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած վակուում կարգավորիչը փոխարինվել է նորով՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 38580 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 10198 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 8113 զանգ (79,6%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2085 զանգ (20,4%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 28382 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 20330 զանգ (71,6%), իսկ մարզերինը՝ 8052 զանգ (28,4%):



185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկարգ

	Ստորաբաժանում	2021 ղեկտեմբեր	2022 ղեկտեմբեր	
Նեղոսային	Ընդամենը	11094	10198	-8.08%
	Երևան	8951	8113	-9.36%
	Մարզեր	2143	2085	-2.71%
Շահագործում	Շահագործում	25003	28382	13.51%
	Երևան	17485	20330	16.27%
	Արարկիի	4022	3021	-24.89%
	Քանաքեռ-Զեյթուն	2070	2486	20.10%
	Մաշտոց	2391	2723	13.89%
	Շահումյան	1878	2824	50.37%
	Շենգավիթ	1889	3506	85.60%
	Կենտրոն	2008	2761	37.50%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	1818	1271	-30.09%
	Էրեբունի	1409	1738	23.35%
	այդ թվում կոյուղու վթար	91	165	81.32%
	այդ թվում դիտահորի խցանում	5154	5773	12.01%
	ՄԱՐԶԵՐ	7518	8052	7.10%
	Հարավ	3666	3419	-6.74%
	Հյուսիս	3852	4633	20.28%
	այդ թվում կոյուղու վթար	34	43	26.47%
այդ թվում դիտահորի խցանում	2676	2777	3.77%	
Ընդամենը	36097	38580	6.88%	

● 2021թ. դեկտեմբերի համեմատ՝ 2022թ. դեկտեմբեր ամսին 8,08 %-ով նվազել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակն ավելացել է 13,51 %-ով:

● 2021թ. դեկտեմբերի համեմատ՝ 2022թ. դեկտեմբեր ամսին 68 %-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 5 %-ով՝ նվազել է 5 րոպեից ավել զանգերի քանակը և 140%-ով ավելացել է հայտարարությունների լուսն ավտոմատ ծառայության միջոցով, ինչն էլ վկայում է այն մասին, որ բաժանորդները ջրանջատման մասին տեղեկատվությանը փորձում են ծանոթանալ լսելով տեղադրված պլանային և վթարային ջրանջատումների ձայնագրությունները:

● 2021թ. դեկտեմբերի համեմատ՝ 2022թ. դեկտեմբեր ամսին 16,68%-ով ավելացել է ջրամատակարարման բողոքները:




ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





Տարին ավարտվեց 7 հաղորդագրությունից բաղկացած տեղեկատվական շարքով՝ 2022 թվականին Վեոլիայի ձեռքբերումների մասին (ջրամատակարարման տևողություն, ներդրումների ծավալ, տեղադրված



ջրաչափեր, պետություններ վճարված հարկեր և այլն), որոնք համոզիչ վկայում են ընկերության փաստացի առաջընթացը գործունեության բոլոր հիմնական ուղղություններով: Իսկ դրանից մի քանի օր առաջ Հանրային Կապերի բաժինը /ՀԿԲ/ ներկայացրել էր պաշտոնական հաղորդագրություն Վեոլիա Խմբի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի գոտու ֆինանսական տնօրեն, Վեոլիա Ջուր

ՓԲԸ տնօրենների խորհրդի նախագահ, Լուիզ Հանանիայի Հայաստան այցի մասին, որի ընթացքում վերջինս հանդիպել էր ինչպես ՀՀ ՏԿԵՆ Նախարար Գնել Սանոսյանի, այնպես էլ ՀՀ ՀՄԿՀ նախագահ Գ. Բաղդասյանի հետ, որի ընթացքում քննարկվել են ինչպես ընթացիկ խնդիրներ՝ տարեկան հաշվետվության, ջրամատակարարման ծավալների, ընկերության հասույթի և ծախսերի վերաբերյալ, այնպես էլ առաջիկա ծրագրերը, մասնավորապես, արևային կայանների ու հիդրոէլեկտրակայանների միջոցով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ սեփական կարիքների համար էլեկտրաէներգիայի արտադրությանը վերաբերող, որի նպատակը մեղմելն է էլեկտրաէներգիայի արժեքի ազդեցությունը ջրի սակագնի վրա:

Ընդհանուր առմամբ հրապարակումներ դեկտեմբերին շատ չեն եղել: Դա մասամբ պայմանավորված է նրանով, որ արդեն ավարտվել էին Վեոլիա Ջուր ընկերության ինչպես Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրով (ՊԿԱԾ – 2022) նախատեսված, այնպես էլ շահագործման տեղամասերի ու տեխնիկական տնօրինության ուժերով իրականացվող ջրաշինարարական աշխատանքների մեծ մասը, մասամբ էլ եղանակային անբարենպաստ պայմաններով, որի արդյունքում դրանք ավելի նվազ տեմպերով էին շարունակվում, հատկապես լեռնային ու նախալեռնային շրջաններում:

Դրանից բացի, բնակավայրերում ձմռանն ընդհանրապես արգելվում է շինարարության նպատակով փողոցները քանդել՝ տրանսպորտային շարժը չխոչընդոտելու նպատակով: Սակայն վթարների վերացման, դիտահորերում փականների, մյուս սարքավորումների վերանորոգման կամ տեղադրման ամենօրյա աշխատանքները հաշվետու ամսին ընթացել են ամենուր: Երբեմն էլ հատկապես ցածրադիր գոտիներում բարենպաստ օրերին նաև շարունակվել է ջրագծերի ու կոյուղագծերի կառուցումը, ինչը լուսաբանվել է ՀԿԲ-ի կողմից:

Այսպես, անդրադարձ է կատարվել ՊԿԱԾ-ով նախատեսված ներդրումային ծրագրի ևս մեկ բաղադրիչի՝ «Կաթնադրյուր», «Ղազարավան» և «Ապարան» ջրաղբյուրներում խորքային հորերի թվով 31 տանիքի վերանորոգմանը, որը կատարվել է Ընկերության «Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության» աշխատակազմի կողմից: Աշխատանքների իրականացման համար Վեոլիա Ջուր ՓԲԸ-ն տրամադրել էր շուրջ 50 մլն դրամ:

Շահագործման տեղամասերի սեփական ուժերով կատարված աշխատանքներից լուսաբանվել է «Աշտարակ» շահագործման տեղամասի կողմից Արմավիրի մարզի Շահումյանի Թոշնաֆաբրիկա բնակավայրի համար ջրամատակարարման նոր գծի կառուցումը, ինչպես նաև Վանաձորի «Մալիտակ ջուր» ՋՄԿ-ում նոր խառնարանի կառուցումը:

Վեոլիա Թիմը դեկտեմբերին շարունակել է ապահովել համակարգի ինժեներական կառույցների անխափան աշխատանքը, հետևաբար ջրամատակարարումը Երևանում, Վանաձորում, Գյումրիում, Կապանում, Իջևանում, Մեղրիում, Միսիսիանում, Արգելում, Ալափարտում, Բոնակոթում և այլ բնակավայրերում: Այդ թվում վերացվել են խոշոր «Ալավերդի-Արձիս» և «Վարդ - Բաղ - Գյումրի» մայրուղային ջրատարների վթարները:

Հատկապես կարևոր է եղել ՀԿԲ-ի օպերատիվ անդրադարձը առաջին ձյան հետ լեռնային և նախալեռնային շրջանների մի շարք բնակավայրերում ստեղծված



արտակարգ իրավիճակին: Ջրի մաքրման կայանների (ՋՄԿ)՝ սարքերում գտնվող գետային ջրընդունիչները պարբերաբար սառցակալել են խոչնդոտելով ջրի հոսքը դեպի ՋՄԿ-ներ: Դրանց սպասարկող անձնակազմերը, օրինակ, Դիլիջանում, Մեղրիում, Կապանում, ստիպված են եղել շարունակաբար կոտրել սառույցն ու բացել գետերի հուները՝ ապահովելով ջրի անարգել մուտքը ջրընդունիչներ, նշված բնակավայրերի անխափան ջրամատակարարման համար: Այս թեմային ՀԿԲ-ն անդրադարձել է լուսանկարաշարով:

Ընթացիկ լուսաբանված մյուս կարևոր աշխատանքներից կարելի է առանձնացնել Գառնիի ջրաղբյուրում իրականացվող կարևորագույն ծրագիրը: Այստեղ Վեոլիայի «ՋԸԱՌ» ծառայությունը ջրընդունիչներից դեպի քլորակայան կառուցել է 1000մմ տրամագծով 80 մետրանոց նոր խողովակաշար, նպատակ ունենալով շահագործումից հանել գործող և քլորի հետ մշտական շփումներից քայքայված, վթարային վիճակում գտնվող 2 ավելի փոքր տրամագծով խողովակաշարերը: Այդ կերպ բացառվելու էր Գառնի-Երևան մայրուղային ջրատարի շարունակական կանգառները վթարային խողովակների անխուսափելի դարձած վթարների պատճառով:

Հաշվի առնելով, որ նշված մայրուղային ջրատարով ջուր են ստանում տասնյակ հազարավոր բաժանորդներ, ծրագրին անդրադարձ է կատարվել 3 անգամ: ՀԿԲ-ն նախ ներկայացրել է նախապատրաստական աշխատանքները, որ նոր ջրագիծը գործող ցանցին միացնելու հետ կապված ջրանջատումը երկար չունի, այնուհետև, մի քանի օր անց, լուսաբանել է աշխատանքների ընթացքը, իսկ հաջորդ առավոտ տեղեկացրել է, որ գործը շարունակվել է նաև գիշերը՝ լուսարձակների լույսի ներքո և ՎեոլիաԹիմը արդեն ժամը 04.30-ին վերսկսել է Գառնի-Երևան մայրուղային ջրատարի շահագործումն ու Երևանում և Արարատի մարզի բնակավայրերում վերականգնել է սպառողների ջրամատակարարումը:

Հաշվետու ժամանակաշրջանում նաև հրապարակվել են բազմաթիվ վթարային ու պլանային ջրանջատումների մասին մամուլի հաղորդագրություններ, ինչպես նաև ապրանքների ու ծառայությունների գնման մրցույթների, թափուր աշխատատեղերի առկայության մասին հայտարարություններ: Դե իսկ դեկտեմբերի 31-ին Վեոլիա ջուր ընկերությունը շնորհավորել է հանրությանը՝ Նոր Տարվա ու Սուրբ Ծննդյան տոների առթիվ ու մաղթել լավագույնը 2023 թվականին:

Դեկտեմբերի հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia)-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. [Veolia.am](https://www.veolia.am) պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և [youtube Veolia Jur](https://www.youtube.com/Veolia_Jur) էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների պահանջները, Ընկերության Հյուսիս Շահագործման տնօրինության թվով 87 աշխատողի համար Բաժնի կողմից կազմակերպվեց և իրականացվեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները.

▶ Վեոլիա Գրուպի «Փոստրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջները,

▶ Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքներում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,

▶ Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ բարձրության վրա» ԲՌԿ ստանդարտի պահանջները,

▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները թեմաներով:



● Բաժինը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 23/11/2006թ. N 1933-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրակայանների շահագործման անվտանգության կանոնների» տեխնիկական կանոնակարգի և «ՀՍՏ 312-2009_Կազմակերպությունների էլեկտրատեխնիկական և էլեկտրատեխնոլոգիական անձնակազմերին էլեկտրաանվտանգության որակավորման խմբեր շնորհելու պայմաններ» ստանդարտի պահանջներով, կազմակերպեց «Էներգետիկայի գիտահետազոտական ՓԲԸ» հավաստարմագրված փորձագետների կողմից իրականացրեց Ընկերության Էլտնտեսությունները շահագործող, սպասարկող անձնակազմի որակավորման դասընթաց թվով 2 աշխատակցի համար:

● Միաժամանակ, ղեկավարվելով վերը նշված կանոնակարգով և պահանջներով և Հիմք ընդունելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի Գլխավոր տնօրենի կողմից հաստատված «Ընկերության Էլտնտեսությունները շահագործող, սպասարկող անձնակազմի ուսուցման և որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու մասին կարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները, Բաժինը, «Էլտնտեսությունները շահագործող, սպասարկող անձնակազմի ուսուցման, որակավորման հանձնաժողովի» հետ համատեղ, կազմակերպեց և իրականացրեց

▶ «Էլտնտեսությունները շահագործող, սպասարկող անձնակազմի որակավորման» դասընթացը՝ Ընկերության թվով 22 աշխատողի համար

▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» դասընթացը՝ Ընկերության թվով 27 աշխատողի համար

▶ «Երթևեկությունը աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտ դասընթացը՝ Ընկերության թվով 27 աշխատողի համար:




● ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով Վեոլի Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի պահանջները, Ընկերության Առևտրային տնօրինության մասնագետ-տեսուչների աշխատանքային պարտականությունների անվտանգ կազմակերպման և իրականացման մակարդակը բարձրացնելու անհրաժեշտությունը, թվով 118 աշխատակցի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 3 մոդուլից բաղկացած առկա դասընթացները.

- ▶ «Ավտոմեքենաների անվտանգ շահագործում» թեմայով առկա դասընթաց,
- ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունն աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները թեմայով առկա դասընթաց,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» թեմայով առկա դասընթաց:



● Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 22-ի թիվ 2399-Ն որոշմամբ հաստատված «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգի պահանջները, Բաժինը «Գազին ՄՁ» ՍՊԸ-ում կազմակերպեց Գազի տնտեսության պատասխանատու անձի որակավորման դասընթաց Ընկերության թվով մեկ աշխատողի համար:

2021-2022թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ




5.2 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 4 քլորակայանում, 2 պոմպակայանում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 2 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:

2022 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



5.3 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԱՐՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ, ՏԻՄ-ԵՐԻ և ԱՅԼ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

● Համաձայն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի որոշմամբ հաստատված՝ ՀՀ Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլանի պահանջների սույն թվականի դեկտեմբերի 26-ին Ընկերության «Հարավ» շահագործման տնօրինության «Էջմիածին» շահագործման տեղամասի մեկ վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնող խումբ՝ իրեն ամրակցված գործիքների լրակազմով և մեքենայով, ՈԱԱ բաժնի համակարգմամբ, մասնակցեց ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում անցկացված «Հրդեհաշիջման և որոնողափրկարարական աշխատանքների իրականացումը բազմաբնակարան շենքում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնասիրությունը:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



6.1. Համակարգչային ցանց

Դեկտեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Տրամադրվել են նոր համակարգիչներ և հին համակարգիչները նույնպես վերաբաշխվել են:
- Կատարվել են մոնիտորինգային աշխատանքներ՝ անվտանգության տեսահսկման համակարգերի ուղղությամբ:
- Մի շարք աշխատանքներ են իրականացվել՝ անսարք սարքավորումները փոխարինելու նոր սարքավորումներով, ինչպես նաև տեղադրվել են նորերը:
- Գրուպի կիբերանվտանգության դեպարտամենտի հետ համատեղ մշակվել է նոր կիբերանվտանգության ուղղված քաղաքականություն՝ Արդյունաբերական կիբերանվտանգությունը բարձրացնելու նպատակով:
- Ներդրվել են մի շարք կիբերանվտանգության համակարգեր:
- Իրականացվել են Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Իրականացվել են Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Սպասարկվել է մոտավորապես 600-630 զանգ SS բաժնի աջակցության համարով:
- Գրանցվել, սպասարկվել և փակվել է մոտ 700 SS աջակցության տոմս:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Դեկտեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Մի շարք հաշվետվություններ են պատրաստվել և տրամադրվել ՀՕԿՀ և Ջրային Կոմիտե, ինչպես նաև տարբեր ներքին և արտաքին աուդիտորներին:
- Ինտերակտիվ համակարգում կատարվել են փոփոխություններ, կապված Առևտրային սնօրինության և այլ ստորաբաժանումների գործընթացը ավելի ավտոմատիզացնելու հետ:
- Ակտեր
- Ինտերակտիվ համակարգի միջոցով ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Խախտման արձանագրություններ			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Յյուսիս	13	6.66	1.31
Էրեբունի	10	6.62	1.27
Շենգավիթ	6	1.80	0.35
Կենտրոն	6	2.87	0.58
Արաբկիր	11	11.08	2.22
Մաշտոց	36	17.70	3.19
Շահումյան	48	22.49	3.96
Եղվարդ	7	1.22	0.23
Քանաքեռ-Զեյթուն	4	1.03	0.18
ՍԿԲ	77	43.47	8.11
Լոռի	2	0.59	0.10
Շիրակ	6	1.37	0.25
Արթիկ	2	0.77	0.14
Արարատ	11	0.97	0.17
Աբովյան	32	20.08	3.61
Յրազդան	2	0.35	0.07
Ալավերդի	4	1.55	0.28
Ապարան	1	0.21	0.04
Արտաշատ	15	1.74	0.31
Էջմիածին	2	0.70	0.12
Թալին	1	0.15	0.03
Իջևան	3	0.15	0.03
Կապան	2	0.52	0.10
Մասիս	1	0.92	0.16
Վշտարակ	7	2.53	0.43
Զարենցավան	2	0.73	0.15
Ստեփանավան	4	2.06	0.37
Ընդամենը	315	150.34	27.75

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ) Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում են լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները:

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջանոցություն		Անսաքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Յյուսիս	19	31.67	183	0.48
Էրեբունի	11	4.60	268	1.47
Շենգավիթ	17	8.74	282	5.40
Կենտրոն	24	15.89	238	1.97
Արաբկիր	21	13.20	235	0.65
Մաշտոց	25	13.18	103	3.94
Շահումյան	23	6.55	78	0.33
Եղվարդ		-	44	0.15
Քանաքեռ-Զեյթուն	9	12.02	135	0.36
Լոռի	21	35.30	66	2.06
Շիրակ	41	14.44	70	2.04
Արթին	2	0.52	14	0.09
Արարատ	3	0.68	36	0.33
Արմյան	77	40.12	145	30.04
Յրազդան	11	3.10	20	0.23
Ալավերդի	4	1.62	84	0.36
Աշոցք	3	1.29	18	0.11
Ապարան	3	1.48	5	0.03
Արտաշատ	4	0.64	221	0.75
Բերդ		-	1	0.00
Գավառ	4	3.26	30	0.37
Գորիս	3	1.29	24	0.34
Դիլիջան	9	4.12	15	0.07
Եղեգնաձոր	1	0.26	3	0.00
Էջմիածին	20	7.04	109	0.34
Թալին	2	0.45	1	0.07
Իջևան	4	0.37	9	0.04
Կապան	13	3.87	128	0.36
Ճամբարակ	1	0.05	2	0.02
Մասիս	18	16.63	44	0.85
Մարտունի	1	0.52	5	0.07
Նոյեմբերյան	2	1.03	19	0.17
Արմավիր	14	4.12	117	0.72
Ջերմուկ		-	1	0.00
Սևան	1	0.86	3	0.00
Վայք	1	0.26	6	0.02
Վարդենիս		-	2	0.04
Աշտարակ	4	1.62	5	0.01
Զարենցավան	4	0.85	20	0.11
Սիսիան		-	83	0.13
Սպիտակ	4	0.69	9	0.02
Ստեփանավան	2	1.03	7	0.02
Տաշիր		-	7	0.04
Ընդամենը	426	253.36	2895	54.62



«ՎԵՈՒԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Սարգսի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am